ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1437-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով և հաշվի առնելով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անհամապատասխանություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել և հաստատել Ճամբարակ համայնքի Դպրաբակ բնակավայրի 05-031-0107-0057 կադաստրային ծակագրով գտնվող գյուղատնտեսական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացողող 1.8հա հողամասի, տեղադիրքը, սահմանները, երկրաչափական և գծային չափերը, ինչպես նաև հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Էլեկտրոնային քարտեզում կատարել հողամասի սահմանների ուղղում և հաստատել Ճամբարակ համայնքի Դպրաբակ բնակավայրի 05-031-0107-0057 կադաստրային ծածկագրով գտնվող համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1.8հա գյուղատնտեսական նշանակության հողամասի տեղադիրքը,գծային չափերն ու երկրաչափական պատկերը, հաշվի առնելով,որ հողամասի մակերեսը չի փոփոխվում:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 04
ք. Ճամբարակ